Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI) Կալիֆոռնիայում

2008թ.

Ի՞նչ է Լրացուցիչ Ապահովության Եկամուտը

Լրացուցիչ Ապահովության Եկամուտը (SSI) դաշնակցային մի ծրագիր է, որ կարիքավոր մարդկանց ամսական կանխիկ փող է վճարում: Լրացուցիչ Ապահովության Եկամուտը նախատեսված է 65 եւ ավելի տարիք ունեցող մարդկանց համար, ինչպես նաեւ որեւէ տարիքի կույրերին եւ հաշմանդամներին՝ ներառյալ երեխաները:

Այն ստանալու պայմաններին բավարարելու համար դուք պետք է ունենաք ցածր եկամուտ կամ ոչինչ եւ քիչ դրամական միջոցներ: Դա նշանակում է, որ ձեզ պատկանող իրերի արժեքը չգերազանցի 2,000 դոլար՝ եթե դուք ամուրի եք, կամ 3,000 դոլար՝ եթե դուք ամուսնացած եք: Ձեր տան արժեքը հաշվի չի առնվում: Սովորաբար, հաշվի չի առնվում ձեր ինքնաշարժի արժեքը: Կարող են հաշվի չառնվել նաեւ որոշ այլ միջոցներ, օրինակ, գերեզմանի հողաբաժինը:

Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանալու համար դուք պետք է դիմեք նաեւ որեւէ այլ կանխիկ նպաստների համար, որոնք դուք կարող եք ստանալ:

Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանալու համար դուք պետք է ապրեք Միացեալ Նահանգներում կամ Հյուսիսային Մարիյանայի կղզիներում: Եթե դուք Ամերիկայի Միացեալ Նահանգների քաղաքացի չեք, բայց բնակիչ եք, դուք նույնպես կարող եք Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստանալ: Լրացուցիչ տեղեկության համար կարդացեք «*Լրացուցիչ Ապահովության Եկամուտ (SSI) Ոչ Քաղաքացիներու Համար*» հրատարակությունը (հրապարակման համար 05-11051-AM):

Կալիֆոռնիայի նահանգը գումար է ավելացնում դաշնակցային վճարումներին: Յուրաքանչյուր ամսվա սկզբման ձեր կողմից ստացված վճարումը ընդգրկում է դաշնակցային վճարումը եւ Կալիֆոռնիայից վճարվող լրացումը:

Բժշկական օգնություն

Եթե դուք ստանում եք Լրացուցիչ Ապահովության Եկամուտ, դուք ինքնաբերաբար կարող եք ստանալ նաեւ բժշկական օգնություն, Մէտիքէլ (Medi-Cal): Մէտիքէլի համար առանձին դիմում չի պահանջվում: Եթե Մէտիքէլի մասին հարցեր ունեք, խնդրում ենք կապ հաստատեք ձեր տեղական շրջանային բարեկեցության գրասենյակի հետ:

Պարենային կտրոններ

Կալիֆոռնիայում Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստացողները **չեն կարող ստանալ պարենային կտրոններ**, որովհետեւ նրա փոխարեն նահանգը գումար է ավելացնում Լրացուցիչ Ապահովության Եկամուտի վճարումներին:

Սակայն, դուք կարող եք ստանալ պարենային կտրոններ.

- Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դիմումնագրի պատասխանը սպասելու ընթացքում.
- Եթե մերժվում է ձեր Լրացուցիչ Ապահովության Եկամուտի դիմումը.
- Եթե դուք տեղափոխվում եք այլ նահանգ:

Լրացուցիչ տեղեկության համար դիմե՛ք ձեր տեղական շրջանային բարեկեցության գրասենյակ:

Այլ սոցիալական ծառայություններ

Այլ ծառայություններ, որոնք դուք կարող եք ստանալ տեղական շրջանային բարեկեցության գրասենյակի միջոցով ընդգրկում են.

- Կույր կամ հաշմանդամ եղող մարդկանց օգնական շների համար հատուկ վճարում.
- Տնային աջակցության ծառայություններ. ինչպես նաեւ
- Պաշտպանիչ ծառայություններ:

Լրացուցիչ տեղեկության համար դիմե՛ք ձեր տեղական շրջանային բարեկեցության գրասենյակ:

Լրացուցիչ Ապահովության Եկամուտի ամսական վճարումների գումարները

Գումարները ընդգրկում են դաշնակցային եւ նահանգային վճարումները միախառն: Բոլոր Լրացուցիչ Ապահովության Եկամուտ ստացողները չեն ստանում առավելագույն գումարը: Ձեր վճարումը կարող է ավելի ցածր լինել, եթե դուք ունեք այլ եկամուտ: Ապրիլից գումարները պիտի փոխվեն հետեւյալ աղիւսակի համեմատ.

Դասակարգ	2008թ. ընդհանուր ամսական վճարում		
Ամուրի մարդիկ	***Տարեցներ***	***Հաշմանդամներ***	***Կույրեր***
Անկախ ապրող անձ	$870.00	$870.00	$935.00
Ոչ բժշկական ծերանոց (board and care)	$1,049.00	$1,049.00	$1,049.00
Անկախ ապրող անձ առանց խոհանոցային պայմաններու	$954.00	$954.00	
Ուրիշ ընտանիքի հետ անվճար բնակող	$658.67	$658.67	$739.67
Հաշմանդամ երեխա (18 տարիքից պակաս)		$756.00	
Ուրիշ ընտանիքի հետ բնակող հաշմանդամ երեխա (18 տարիքից պակաս)		$532.67	
Տարեց կամ հաշմանդամ զույգեր			
Անկախ ապրող զույգ	$1,524.00		
Ոչ բժշկական ծերանոց (board and care)	$2,098.00		
Անկախ ապրող զույգ առանց խոհանոցային պայմաններու	$1,692.00		
Ուրիշ ընտանիքի հետ անվճար բնակող զույգ	$1,233.00		
Կույր զույգեր			
Անկախ ապրող զույգ			$1,751.00
Ուրիշ ընտանիքի հետ անվճար բնակող զույգ			$1,460.00
Կույր մարդ (կին) տարեց կամ հաշմանդամ կնոջ (ամուսնու) հետ			
Անկախ ապրող զույգ			$1,666.00
Ուրիշ ընտանիքի հետ անվճար բնակող զույգ			$1,374.00

Սոցիալական Ապահովության հետ կապ հաստատելը

Հավելյալ տեղեկության համար, այցելեցեք մեր կայքէջը, ***www.socialsecurity.gov*** ուր նաեւ կարող եք գտնել մեր վերջին հրատարակությունները: Կարող եք նաեւ զանգահարել հետեւյալ անվճար թվին **1-800-772-1213** (խուլերը եւ դժուար լսողները թող զանգահարեն հետեւյալ հատուկ TTY թվին **1-800-325-0778**): Մենք բոլոր խօսակցությունները գաղտնի պահում ենք: Մենք կարող ենք պատասխանել ձեր մասնայատուկ հարցումները առաւօտյան ժամը 7-ից մինչեւ երեկոյան ժամը 7, Երկուշաբթի օրից մինչեւ Ուրբաթ: Մենք կարող ենք ապահովել թարգմանչի անվճար ծառայություններ՝ հեռախոսով կամ ձեր տեղական գրասենյակում: Ինքնաշխատ հեռաձայնային ծառայությամբ մենք որոշ հարցերի կարող ենք պատասխանել եւ տեղեկություններ հայթայթել օրը 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու քաղաքավար ծառայություն: Այս պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ խօսակցությունները:

Social Security Administration
SSA Publication No. 05-11125-AM
Supplemental Security Income
In California (Armenian)
January 2008